

եւ նոր օգտակար բարեաց եւ ճշմարտութեանց մշտի հանդիսանալով հնասէրք եւ նորասէրք կարող են հասնիլ նաեւ երկնից թաղաւորութեան ժառանգութեան, զոր կմաղթէ իւր սիրելի ընթերցողաց՝

Հ Ա Յ Կ Ո Ր Պ, Ի Ն.

ԲՐՈՒՅԸ ԵՒ ԵՐԿՐԱԿՈՐԾԸ.

Ա.

Մի մարդ ունէր իրան տանն
Երկու աղջիկ անձրման.
Մէկը միտից աւելի
Երանց մարը սիրելի:
Երկուքն եւս հրճագանդ,
Երեսներին համեստ քօղը,
Չունէր նրանցից մի զանգատ
Ոչ հարեւան, ոչ ծրնօղը:
Աւելն մէկի մերթ ձեռին,
Կուժը միտի մերթ ուտին.
Երկուքն եւս նման ին
Աշխատատէր մեղուին:
Ապրէ՛ր, օրհնում ասում էք
Նոցա մայրը ամեն օր,
Բարո՛ւր բախտով հարս դնար,
Եօթը տղի մայր դառնար:
Երբ օր նորա մեծացան,
Երկուքն եւս հարսնացան,
Մէկը գնաց բրնձաբի,
Միւսն երկիր գործողի:
Ամեն մէկի իւր պլլը
Տարաւ հարսին իւր գիւղը,
Եւ իրարից շատ հեռու
Ապրում էին քորքն երկու:
Շատ ժամանակ անց կացաւ,
Եւ ոչ մէկից լուր չեկաւ,
Կարծեւ հօր—մօրն մոռացան
Երբ նոցանից հեռացան:

Մի օր արամած նոցա մայրն
Խնդրեց ասաց իրան առն,
Դնա եւ տես ինչ դառան
Մեր աղջկերքն եւ փեսան:
Հանրայ ընկաւ նոյն օրը
Մարդը փայտը իւր ձեռին,
Եւ խեղճ կնկայ աչքերը
Մնաց մարդի միջո մանրին:
Շատ չքաշեց եւ եկաւ
Եւ իւր կնկան նա ասաց,
Լա՛ւ բախտ մեր դուռն եկաւ,
Լա՛ւ տեղ տուինք մեր աղջկանց:
Մեր այն բրնձա խեղճ փեսան,
Սրտան հացի կարտան այն,
Հինգ վեց կուէ մեծ աման
Շինել գրել էր զըռան:
Եւ երկրնքի բացուելուն
Արեւի էր ապաստմ,
Որ իւր ամանն չորանար՝
Տանէր ծախէր հացի տար:
Դճւ եւս, ասաց աղջիկս ինձ,
Խնդրիք Աստուած արեւ տայ,
Թէ ոչ, եթէ անձրեւեց,
Մեր ամաններ կփչանայ:
Աղօթը արի եւ, ճանրայ
Միեւնոյն օրն եւ ընկայ,
Եւ շուտ մօտի գիւղն հասայ,
Միւս փեսիս տունն մտայ:
Տեսայ տխուր նստած էր,
Աղջիկս էլ լացում էր,
Հարցրի պատճառըն ինչ էր,
Ի՛նչ էր նորանց պատահեց:
Է՛՞՛՛՛ ինչ անեմ— ինչ տեսն,
Ասաց լարով մեր փեսէն,
Չրկէր իմ սերմ, ոչ իմ արտ,
Երբ օր չունենք մեզի բախտ:
Էս մէկ ամիս է հիմա
արտս վարել ցանելի՝
Ասում եմ էս է հիմա
Երկինքն ամպ է՝ կանձրելի:
Բայց ամպերը քարացած
Անձրեւները ուշացած:

Եւ սերմերս նոր ծած
Քիչ է մնում չորանան:

Եթէ մի երկու օր էլ

Անձրեւ չըգայ չըջրի,

Հոգը զլիսն է եկել,

Քաղցած մեռնի՞ծք մենք պիտի:

Նորա համար Աստուծոց

Միշտ անձրեւ ենք մենք խնդում,

Եւր ողորմած շնորհից

Մի կտոր հացի սպասում: —

Լացաւ աղջիկս, ինձ ասաց,

Գու եւս խնդրիր, որ Աստուած

Մեզ շուտ անձրեւ ուղարկի,

Մեր խեղճ տունը չքանդի:

Աղօթք արի, գուրս եկայ,

Համբիւն հրքան շուռ եկաք՝

Ո՞րքան մտրումս մայն եկայ

Ես այս խեղրը չգտայ

Թէ որ փեսին մի պիտի

Աստուած աղօթքին լրսի,

Ո՞ր աղջրկաս տուն քանդի՞

Որ միւսի տուն չինի:

ՈՒՂՏԸ ԵՒ ԱՂՈՒԷՍԸ:

Բ.

Մի ծեր աղուէս պատանեց

Մի օր յանկարծ մի նշտի,

Որ արձակած իւր բեռից

Արածում էր ի զաշտի:

Խեղճի մարմինն չորացած,

Ոսկր եւ կաշին էր մնացել,

Եւ ողջ մաղկին վար թափած,

Ոտից զուխն քստտել:

Նորա ստպատուն ուռած

Այնքան վերքով էր պատած,

Որ աղուէսի գուժ շարժեց՝

Ուղտի ցաւը հարցրրեց:

— Մի տէր ունիմ անխղճմտանք,

Ասաց, տառը տարուց վեր,

Որ ինձ բաց ի չարչարանք՝

Արի՛չ մի բան չէ տուել:

Զունի ոչ տոն, ոչ ուրբաթ,

Ոչ խղճմրտանք, ոչ հաւատ:

Ես չեմ տեսել իմ կեանքում

Եւ ոչ մի օր հանգստեան:

Առաւօտից իրիկուն

Նորա բեռ եմ կրում,

Այնքան է նա ինձ տանջում,

Որ գիշերն քնել չեմ կարում:

Վաթսուն լիտրը իմ մէջքիս

Աղ է բարձում մի հանքում,

Առանց խղճով վերքերիս

Մինչեւ քաղաք ինձ բշում:

Նշանք բեռը չալակիս

Օրը երեք չորս անգամ

Երկու մղոն պէտք է ես

Երկար ճանքաս գնամ գամ:

Հերիք չէ գեւ ինձ համար

Դար ու վեր եւ տար ու բար,

Պէտք է գեւ մի մեծ գետից

Անցնեմ ծանր բեռն ուսիս:

Այս է իմ օրն — իմ սեւ կեանք,

Անգութ տիրոջս խղճմրտանք:

Գիտես ցախս թէ մի ճար,

Ասա խնդրեմ ինձ համար: —

Յածքացրեց իւր պոչը

Փիխտփայ աղուէսը,

Մի բաւ խորը մտածեց,

Տնկեց պոչը եւ տսեց:

Երբ կմտնես դու գետը

Նստիր ջրի մէջ տեղը:

Ողբ ջրում կը հարսի,

Բեռիդ կէտը կպակսի:

Ուղտը տրախ շնորհակալ՝

Երբ գետի մէջ տեղն հասաւ,

Դարձադրեց այն հըմար,

Տեսաւ բեռը թեմեղաւ:

Եւ այնուհետ իւր ցախն

Այգպէս էր նա գեղ անում,

Եւ տալիս փաւր — ողորմի

Հօր ու մօրը աղուէսի:

Բայց այդ խեղճ իրաւ — ճար

Ազգտեց իրան շատ երկար:

Եւ իւր վերքին շատ էլ թանկ

Հասաւ վերքը այդ մնարք:

Անգում տէրը երբ տեսաւ:

Ուզոյր ջրքին սոփորեց:

Բեռը փոխեց — բուրդ բարձաւ:

Քաղաք կրել սկսաւ:

Բարձած ուզոյր միամիտ

Հասաւ թէ չէ այն գետը:

Սոփրած մարը բնկաւ միտ:

Հասաւ ջրքի մէջ տեղը:

Բացց աչս անգամ աղուէսի

Խրատն քանդեց նորա տունն:

Վաճառն լիարը բեռն մէջքի

Շինեց ջուրը իննսուն:

Մինչեւ գետից դուրս եկաւ:

Հոգին բերանըն եկաւ:

Էլ չկարաց փոխել քայլ:

Ընկաւ գետին շնչատապաւ:

Գլխիս էս ի՞նչ միւն եկաւ:

Գետը, ասաց, վրէս հեծաւ:

Յանկարծ աղուէսն վրայ հասաւ:

Ուզոյր թէ՛ք մարցրբաւ:

— Միթէ տեսնում չես ցաւըս:

Էլ ինչ հարցնել ինձ կուզի:

Վաճառն լիարը մէջքի բեռս

Գառել է սար երկամի:

Բռնել չկարաց աղուէսը

Երան դնի ծիծաղը:

— Գիտեմ զիտից եկածը

Ասեմ, ասաց, քո մարը:

Այնքան նստիւր քո տեղը

Մինչեւ ծաղի արեւը:

Երբ յորանայ թաց բուրդը՝

Կթեմեւեւայ քո բեռը:

Արդ քեզ խրատ: Ուզոյ եղբայր:

Որ ԲՅՊ է միայն շատ երկար:

Եւ մի մտնալ խեղ չուենս

Բուրդը աղից դու ջուկեալ:

Թարգմանեաց ի պարսկերէնէ

ՍԱՄՍՈՒՆԻ ԳԵՐԵԱՅԵԱՆՆԵՐ:

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

ՌԱՐՁՐԱՊԱՅԻՒՆ ԲԵՆԻ ԻՇԽԱՆ:

ՄԻՐԱՅԷԼ ԴԵԿՈՒԱՅԵՎԻԶ

ԿՈՎԿԱՍԿԱՆ ՓՈԽԱՐՔԱՅԻՆ Ի Ս. ԷԶՄԻՆՈՒՆ:

Ի 4^{րդ} ամսոյս յաւուր երկուշաբթի
Կայսերապն Մեծ Իշխան Բարձր. Մի.
Քայլել Նիկոլայեվիչ Փոխարքայն Կով-
կասու: — յԻկտիր Վսեմ. Արշակ Տէր
Ղուկասեան զօրապետի բանակին այ-
ցելութեան գնալոյ առթիւ — եւրո-
պական ժամը 11 ին ժամանակները բա-
րեհաճեցաւ զայլ հասանել ի Վաղարշա-
պատ: ուր Ս. Էջմիածնի Միաբանու-
թիւնը արժանաւոր հանգիսի գիմուս-
րեց եւ տարաւ զՆորին Բարձրութիւն ի
Ս. Տաճար. առ դրան Տաճարին Վեհ.
Հայրապետ մեր գիմուսրեց զՆորին
Բարձրութիւն: եւ հրաւիրեց տարաւ
Աւագ Սեղանոյ գիմացը: ուր փառա-
բութեամբ եւ շքեղ հանգիսի մազ-
թանք կատարուեցաւ Սոստափառ Կայ-
սեր եւ Մեծ Իշխան Փոխարքային հա-
մար:

Մազթանքէն յետոյ Բարձր. Մեծ
Իշխանը Վեհափառ Հայրապետին հեա
ի Վեհարան ելաւ՝ ուղեկիցներովը միա-
տեղ: Այնտեղ զինի ճաշելոյ Կայսերապն
Մեծ Իշխանը մէկ ժամի չափ Վեհա-
փառ Հայրապետին հեա տեսակցելով՝
զինի կէսաւուր մեկնեցաւ գնաց զէպ
յԻկտիր:

Նորին Կայսերական Բարձրութեան
հեա ի միասին ուղեկից էին